ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N: ՀՀ ՇՄ-ՄԱԾՁԲ-22/36-1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ N ՀՀ ՇՄ-ՄԱԾՁԲ-22/36 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Գյումրի «22» օգոստոսի 2022թ.

«ՀՀ Շիրակի մարզպետարանը», ի դեմս ՀՀ Շիրակի մարզպետ՝ Ն. Բաղդասարյանի, որը գործում է ՀՀ Շիրակի մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սարգիս Տոնոյան Լեռնիկի» Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն Սարգիս Տոնոյանի, որը գործում է Ա/Ձ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի օգոստոսի 18-ի N 1312-Ն որոշումը և 2022 թվականի հուլիսի 7-ին կնքված N ՀՀ ՇՄ-ՄԱԾՁԲ-22/36 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1 Կատարողը պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով, Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել Պայմանագրով նախատեսված «Տրանսպորտային փոխադրման ծառայություններ»-ի մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն):

1.2 Ծառայության հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգով՝ կարգի պահանջներին համապատասխան:

1.3 Սույն Համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2022 թվականի հուլիսի 7-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 2022 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Սույն Համաձայնագրով 2022 թվականի համար Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **3 591 000 (երեք միլիոն հինգ հարյուր իննսունմեկ հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

2.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն Համաձայնագրի հավելված N 1-ի՝ ֆինանսական պարտավորությունների կատարման վճարման ժամանակացույցին համապատասխան նախատեսված չափերով և ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով և սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն և պարտականությունները, այդ թվում Ծառայության հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության դատարաններում:

3.4 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

3.5 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ	«ՍԱՐԳԻՍ ՏՈՆՈՅԱՆ ԼԵՌՆԻԿԻ» Ա/Ձ
Հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Գ. Նժդեհի 16	Հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Մոցարտի փ. Տուն 16
Բանկ՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	Բանկ՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 900211002424	Հ/Հ 220549720013000
ՀՎՀՀ 05507437	ՀՎՀՀ 57312719
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավել
« 22» օգոստոսի 2022թ. կնք
ՀՀ ՇՄ-ՄԱԾՁԲ-22/36-1 ծածկագրով համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	60231200/1	Տրանսպորտային փոխադրման ծառայություններ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	3591000.0	3591000.0	3591000.0	3591000.0	3591000.0	3591000.0

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի,
Գ. Նժդեհի 16
Բանկ՝ ՀՀ ֆինանսների նախարարության
գանձարանական վարչություն
ՀՎՀՀ 960211002424
ՀԿՀՀ 05507437

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՍԱՐԳԻՍ ՏՈՆՈՅԱՆ ԼԵՌՆԻԿԻ» Ա/Ձ
Հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի,
Մոցարտի փ. Տուն 16
Բանկ՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ

Հ/Հ 220549720013000
ՀԿՀՀ 57312719

(ստորագրություն)
Կ.Տ.